

Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Քիւ 25



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Քիւ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՈՋԱՆԳ

ՄԱՐԿԵԶ ԵՄԻՆԱԿԱՆՄԱՆ

ՄԱՐԿԵԶ



ՃԱՆԱԿԱՆԱԿԱՆ ԲՈՆԵՄԱՆ



ՃԱՆԱԿԱՆԱԿ

ՄԱՐԿԵԶԱՆԻ ԲԱՐՈՋԱՆԳ



ՄԱՐԿԵԶ



ՄԱՐԿԵԶ

ՄԱՐԿԵԶԱՆԻ ԲԱՐՈՋԱՆԳ




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԻՍ ❧ هانراكيداق ❧ HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ ❧ مجموعه علوم ❧ JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 25 || 21 ՅՈՒՆԻՍ 1903



ԴԱՅՏԵՐՈՒ ՄԷՋ



Մարմրեցաւ վերջալոյսի շողն արդէն,
Աղուոր լուսնակն՝ պատուեց քօղը ամպերուն.
Դուրս պողոթկալով լոյս հեղեղը իր տօգոյն,
Մուկ ստուերներ՝ խոյս տան տակաւ սարերէն:

Խորհրդաւոր յուզումներով օրօրուն,
Գիշերն ամբողջ կօծուէ երազն իր արագ:
Սարսուռները՝ չեն փոթորկիր հո՛ն, հեռո՛ւն,
Ուր դաշտին հմայքն՝ կը պարզուի նրբերանգ:

Եկո՛ւր թռչտինք թիթեռներու պէս թեթեւ,
Ծառէ ի ծառ, ծաղկէ ծաղիկ սուրալով.
Լուռ ու հանդարտ ո՞հ այս ժամուն հոգեթով,
Ուր երազներն ալ կը թռչտին հո՛ն, վերեւ:

Թռչի՛նք, թռչի՛նք, անէանանք այդ ժամուն,
Կաթ հեշտանքներ կը կաթկթին վերերէն,
Դաշտերուն մէջ, անտառներուն մէջ անհուն՝
Ուր լուռ երգեր լոյսերն մեզի՝ տի խրկեն:

Ասքաքաւ

ԱՇՈՏ ՊԱԶՊԱԶԵԱՆ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՋ

19.—Ուրիշին ստացուածքը յարգեցեք

Ուրիշին ստացուածքը՝ այսինքն հող՝ եթէ նա ունի, իր տունը եթէ ունի կամ իր հագուստները, իր գործածութեան առարկաները և իր ստակը իրեն կը պատկանի:

Երբեմն փոքր աղջիկներ, նոյն իսկ շատ պատուաւոր, կրնայ պատահիլ, որ շատ խղմօտութեամբ չեն յարգեր ուրիշին ստացուածքը:

Ճանապարհէ մը կ'անցնին, շատ տաք է, ծառէ մը պտուղներ կը քաղեն, այգիի մը մէջէն խաղող, առանց խորհելու ուրիշին պատճառած ֆնասին վրայ. «Օհ, կ'ըսեն, այս կալուածատէրը այնչափ պտուղ ունի որ քաղածնիս բան մը չեն»:

Ուրիշ անգամ մրգավաճառին քովէն չեն հեռանար առանց տուփի սալորէն հատ մ'առնելու. կողովէն չոր թուղ մը, ասոր համը կ'առնեն, անոր համը կը տեսնեն. «Օհ, կ'ըսեն, դարձեալ այնչափ քիչ բան է այս»:

Կ'ուզէ՞ք ձեր պատճառած ֆնասը գիտնալ: Ենթադրեցէք թէ ամէն յաճախորդ տուփէն սալոր մ'առնէ, ահա շուտով ծառը առանց պտուղի կը մնայ և տուփը պարապ:

20.— Ծառայները ունենայ մի՛ գործածեք

Մենք այլևս այն ժամանակները չենք, երբ գերիներ եւ քսրուկներ կային, բայց հակառակ ամէնօրեայ մեր ընկերութեան կազմակերպուելուն, դեռ կը պատահին երբեմն ծառայները չարաչար գործածողներ:

Ագարակատէր մը ծառաներ, գործաւորներ ունի, զոր ամէն վայրկեան կ'աշխատեցնէ, զանոնք կը վարձատրէ իրեն մատուցած ծառայութիւններնուն համար: Բայց իրաւունք չունի ասոր համար ամէն բան պահանջելու: Անոնք իր ծառայութեան մէջ են՝ ըրած պայմաններուն համար և ոչ ուրիշ բանի: Պէտք է անոնց ժամանակ տալ, որ իրենց մասնաւոր գործերուն պարապին, երթան իրենց ծնողքը տեսնելու կամ անոնց գրելու, որպէս զի եթէ կը փափաքին՝ կատարեն իրենց քաղաքային և կրօնական պարտականութիւնները: Նոյնպէս պէտք է շարթուան մէջ գոնէ օր մը թոյլ տան, որ հանգստանան:

Յարգել ծառային իսկուքիւնը, կը նշանակէ սպասողիլ իրենք:

21.—Մարդասիրութիւնը աշխատութիւնով

Փարիզի և քանի մը մեծ քաղաքներու մէջ մարդասիրական ընկերութիւններ կան, որոնց նպատակն է թշուառներուն օգնել ոչ թէ անոնց ողորմութիւն ընելով, այլ այնպիսի վիճակի մէջ դնել, որ իրենց աշխատանքով իրենց պէտք եղած դրամը շահին: Այս ընկերութիւնը դիւրին գործեր գործելու աշխատանոցներ կը բանայ և հոն առէն կարօտեալ օգտակար կերպով կրնայ գործել առանց արհեստ մը սովորած լինելու:

Առ այժմ, տղաքս, դուք այս կերպ մարդասիրութիւն չէք կրնար ընել, բայց վերջը երբ աւելի մեծնաք և ձեր գործերուն տէրը լինիք, հետեւեալ խորհուրդը մտքերնիդ բերէք:

Երբ կրնաք մէկուն շահեցնել այնչափ՝ որչափ կ'ուզէք ողորմութիւն տալ, մի վարանիք: Եթէ ծուլութիւնը թշուառութիւն առաջ կը բերէ, թշուառութիւնն ալ փոխադարձաբար կը ծնի ծուլութիւն: Մուրացող դժբախտները դիւրաւ կը վարժուին ապրիլ միմիայն մուրացկանութեան՝ իրենց հայթայթած արդիւնքովը: Վերջ ի վերջոյ այս ալ արհեստ մը կը դառնայ անոնց համար, կ'ստորանան, անպատիւ կը լինին ու ալ աշխատանք չեն փնտռեր: Միշտ եթէ կարելի է, մարդասիրութիւնը պէտք է աւելի զործ սալով ըլլայ քան թէ ողորմութիւն:

22.—Լաւ գաղափար մը

Ագարակապանուհի մը իր դրան առջեւ նստած բանջարեղէն կը մաքրէ աշխատաւորներու ապուրին համար: Ամառուան մէջ տեղ է. խոտերը դեռ մարգագետնի մէջ են և կարելի է նախադալ թէ այսօր վաղը մեծ փոթորիկ պիտի ծագի: Մեծ դժբախտութիւն պիտի ըլլայ, եթէ անձրեւը հունձքերը վնասէ: Ագարակապանուհին այս խորհելով քիչ մը մտաւտանջ է:

Ահա ճանապարհին վրայ մուրացկան մը կ'երեւի: Կը մօտենայ ագարակապանուհիին և ողորմութիւն կը խնդրէ: Ագարակապանուհին գթած է. ձեռքը գրպանը կը տանի ստակ հանելով աղքատին տալու համար: Բայց յանկարծ միտքը կը փոխէ: «Բարի մարդ, կ'ըսէ, դու դեռ շատ ծեր չես, որ չկարենաս աշխատիլ: Կ'ուզեմ քեզի քիչ մը դրամ շահեցնել, այս ոլորմութիւն մուրալին աւելի լաւ է:» Զայն կ'առաջնորդէ մարգագետինը, հեծանոց մը կուտայ, ամբարանոցը կը ցուցնէ և կը խնդրէ որ խոտը հոն լեցնէ: Մարդը կ'ընդունի և երկու օր այսպէս կ'աշխատի, շահելով իր

անունդը, պառկելու տեղը և քիչ մ'ալ ստակ: Ահա լաւ գաղափար, մարդասիրութիւն ընելու ճշմարիտ և իմաստուն եղանակ մը:

Կրնայ ըլլալ, որ մուրացիկը երկրագործի մը պէս յաջողութեամբ ճարպիկութեամբ չէ աշխատեր, նոյնպէս կրնայ պատահիլ, որ գործը պէտք եղածին պէս չէ կատարուեր, բայց գոնէ չէ մուրացեր, և թէ ագարակապանուհին առանց նուաստացնելու ստակ տուեր է անոր:

23.—Մարդասիրութիւն ընենք յարատեւութեամբ

Մարդասիրութիւն ընելը կրնայ հանոյ՛ մը ըլլալ, որտի հաճոյք մը, բայց խաղ մը չէ: Կան տղաք նոյն իսկ մեծեր, որ մարդասիրութիւնը, ողորմութիւնը կ'ընեն զբօսնելով. պէտք չէ այսպէս ըլլայ:

Վարդուհին, օրինակի համար, օրեր կայ. որ կ'ուզէ հանդիպած բոլոր խեղճերուն բարիք ընել: Եթէ ստակ ունի, անոնց կուտայ, եթէ թոյլ տան՝ տանը մէջ գտնուած ամէն բան պիտի տայ:

Վաղն ալ անոնց վրայ չխորհիր: Մուրացիկի մը քովէն կանցնի առանց զայն տեսնելու, կը մոռնայ թէ խոստացեր էր աղքատ հիւանդի մը այցելութեան երթալ: Այլ չյիշեր թէ փոքրիկ աղջիկ մը պիտի գայ զգեստ առնելու, որուն երէկ խոստացեր էր:

Վարդուհի ողորմութիւն կ'ընէ քմահաճոյքով, խաղաղով, առանց յարատեւութեան: Պէտք չէ այսպէս ընել: Մարդասէր, ողորմած եղէք և թշուառներուն ըրած խոստումներդ մի՛ մոռնալ:


24.—Բանբասանքի սոսկացիք

Երեկ կատարինէ Աննիկէն դժգոհելու առիթ ունեցաւ: Այսօր կը կանչէ ընկերներէն մին ու անոր կ'ըսէ. «Գիտե՞ս... տեսայ որ Աննիկ վարժուհիին գգրոցը բացաւ և բոլորովին նոր գրիչ մ'առաւ: Այլ անոր հետ չխաղանք, նա գող մ'է:» Ահա այս լուրը կը տարածուի դպրոցին մէջ, որովհետեւ փոքր աղջիկները իրար կը հաղորդեն: Շուտով Աննիկ ամէնուն կողմէ երեսէ կը ձգգուի նա չհասկնար թէ ինչո՞ւ համար է այս: Շոտ դժբախտ է որովհետեւ բանբասանքի զոհ է. չար կատարինէն Աննիկէն վրէժ առնելու համար հնարած է այս պատմութիւնը: Դիպումը մը գործը երեւան կը հանէ: Աննիկ անմեղ հրատարակուած է բոլոր ընկերներուն առջև և այժմ կարգը կատարինէին է, որ ընկերութենէն մերժուի:

Աւա՛ղ, բաւբասանքի բոլոր պատմութիւնները այսպէս չեն վերջանար: Որչափ անգամ անմեղը, անկարող լինելով իր անմեղութիւնը հաստատել ամբողջ կեանքին մէջ կը մնայ արհամարուած:

Տղա՛մ, երբեք մի՛ զիջանիք բամբասանք ընելու, որ ցածուքիւն, չարախօսութիւն եւ ստախօսութիւն է:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ



ԲԱՐՈՅԱՎԷՊ

ԵՐԱՐՏԱԳԵՏ ԹՈՂՈՒՆԸ

Եղբորս՝ Հայկին

Լ. Ս.

Ձմրան գեղեցիկ ու պարզկայ օր մը, բուսաբանական պարտէզը գացեր էի՝ պտոյտի: Գետինը բոլորովին ծածկուած էր ձիւնով, և ծառերուն ճերմկորակ դազաթները՝ Լուի ԺԵ.ի Ժամանակին պաշտամուքի զարդարանքները կը յիշեցնէին: Պարտէզին պրօսաանդիներուն մէջ, ո՛չ ոք կը նշմարուէր և արեւին ցուրտ ճառագայթները չէին զօրեւ տաքցնելու բնութիւնը, որ խաղաղիկ անդորրութեան մը մէջ ընկղմած էր:

Ա՛յն կողմերն, ուր պարտէզին շատ աւանձին մասը կը ծածկուի, պտտած ատենս, ուշադրութեանս հանդիպող տեսարան մը ստիպեց զիս որ կանգ առնեմ: Սուգի սևերով հագուած 13—14 տարեկան տղեկ մը, քանի մը մէթր տեղ՝ գետնին ձիւնները կը մաքրէր և հոն գտնուող թռչուններուն ուտելիք նետելով կը զրօսնուր: Սպասաւորներու յատուկ տարազով հագուած մարդ մըն ալ, բաւական ծերունի, տղուն բարերարեալները չխրտչեցնելու համար՝ մէկ կողմ՝ ձգած վերարկուն թեւին վրայ առած կը կենար. տղան պահպանելով և օգնելով:

Թռչուններու յատուկ այս կոչունքին չա՛տ սիրուն փետրաւորներ եկած էին: Ճնճղուկներն ու աղաւնիները յոյժ ընտանի և համարձակ՝ տղուն նետած խոշոր կտորները յափշտակելով կը ճլուլլային... Կարմրալանջները, քիչիկ վայրի վախկոտութեամբ, շագանակենիներու գազաթէն իջնելով կոչունքին մասնակցելու վրայ էին: Իսկ սևագլուխ թռչնիկները, մէկ մէկու

ետեւ շարուած, ձեռք բերել կրցած հացի կտորուանքները՝ ձիւնէն ու անձրեւէն զերծ՝ թուփերու տկտիքը կը քաշէին. և այս սիրուն մատղջուկները, բոլորն ալ, զիրենք կերակրող տղուն՝ կարծես իրենց շնորհակալութիւնը յայտնելու համար, գեղեցիկ ներդաշնակութիւնով մը կը գեղգեղէին:

Տղան, թռչուններու այս վիճակին սրտագին ուրախութեամբ հանդիսատես ըլլալով, անոնց մէջէն՝ տկարներուն, մէկ կողմ



մնացած անկարողներուն մասնաւոր գործով մը ցոյց կուտար և անոնց զատ սնունդ յատկացուցած՝ միւս զօրաւոր ընկերներնուն հացեր մինինիկ պայքարները դիտելով կը զուարճանար՝ ա՛լ աւելի:

Այս տեսարանէն շա՛տ հաճոյք կ'ըզգայի: Ուստի ես ալ տղուն քով գացի, և ձեռքս գտնուող կարկանդակի կտորները մանրելով սկսայ նետել թռչուններուն: Տղան, ըրածէս գոհ մնալը բարեկամական նայուածքով մը ինծի զգացնելէ յետոյ, ըսաւ.

— Խեղճ անասնիկներ. ձմրան ա՛յս ատենը, չեն կրնար կեր գտնել ձիւնածածկ գետնին երեսը, իրաւ որ ասոնք գլթութեան արժանի են:

—Կ'երեւի թէ՛ թռչունները շատ կը սիրէք, պատասխանեցի, մինչ ինքը իր աչքերէն հոսող արցունքին կակծագին տպաւորութիւնը ինէ պահելու համար՝ երեսն անդին կը դարձնէր։

—Այո՛, շատ կը սիրեմ. մանաւանդ սեւագլխիկները՝ խիստ շատ կը սիրեմ։

Տղեկին տխրագին այս խօսքերուն հետ, վիճակին ու շարժուճեւերուն մէջ երեւան եկող ցաւին ու տրտմութեան՝ անցեալ յուղումնառիթ պատահար մը լծորդուած ըլլալու էր անշուշտ։ Եւ վերջապէս, այսքան անկեղծիկ սրտի և բանաստեղծական զգացումներու տէր դեռատի էակի մը՝ այլապէս վշտակրելուն շարժառիթը հասկնալ՝ ինծի համար անօգուտ չէր, սակայն զայն ստուգելու համար տղուն վիշտերը քրքրել անպատշաճ կը թուէր ինծի։

Տղան, թռչուններն ուզածին չափ կշտացնելէ յետոյ, խօսակցութիւննիս շարունակելով ուղղակի պարտէզին ներսերը յառաջանալ սկսանք։ Այս միջոցին, իր քովը գտնուող և ծառայէ աւելի՝ խնամակալ մը ըլլալը հասկցուող ծերունի մարդուն հետ խորհրդակցելէ լետոյ, մեղմ ու տխրահնչիւն ձայնով հետեւեալները պատմեց, բացատրելու համար թախիծին պատճառը, որով կարեկցօրէն հետաքրքրուած էի, և զոր հարցնել չէի համարձակած։

—«Այո՛, դաշտերու այն աղուոր թռչունները շատ կը սիրեմ, որովհետեւ անոնք միտքս կը բերեն անցեալէն կարգ մը դիպուածներ, որոնք վերյիշումը կարի թանկագին և ըզձալի է ինծի համար։ Ես, թռչունները վանդակի մէջ բանտարկելով և դանոնք Աստուծոյ շնորհած օգէն ու ջերմութենէն զրկելով չէ՛ որ կը սիրեմ, ուրիշներուն պէս։ Ո՛չ մէկուն վնաս հասցնելէ զատ, ամէնուն համար գեղեցիկ եղող այս մատղըչուկները՝ խնամելով և պահպանելով կը սիրեմ»։

Այս տարիքին մէջ, տղու մը բերնէն լսուող սա՛ պարզ բայց իմաստասիրական խօսքերը զիս զարմացուցին... Դժբաղդ տըղան, յուզման սաստկութենէն՝ ձեռքը ճակտին տարաւ և խորունկ ա՛հ մը քաշելով նորէն շարունակեց։

« Ինէ մէկ տարու փոքր՝ Ծանի անունով քոյրիկ մը ունէի. ա՛ն ալ թռչունները կը սիրէր սրտագին գորովով մը։ Ա՛հ, պզտիկ մանկուհի... Ծաղիկներուն վրայէն բռնուած թիթեռնիկի մը՝ ձեռքիս մէջ տապալտկելով չարշարուիլը երբ տեսնէր՝ ինքն ալ նեղութեան կ'ենթարկուէր։ Ո՛հ, սիրելի քուրիկս, շատ գթոտ, շատ վեհանձն էր »։

Ու տղան սկսաւ լալ։

Անոր այս վիճակը և սուգը խորհրդանշող սեւ հագուստներն՝ շատ որոշապէս կը լուսաբանէին թէ ինչո՞ւ կուլար... Պահ մը լռութենէ յետոյ, նորէն խօսիլ սկսաւ ու ըսաւ.

« Ամառը քրոջս հետ մեր ամարանոցը կը գտնուէինք։ Օր մը մարգաստանին մէջ կատարեալ ուրախութեամբ խաղացած միջոցնուս բազէի մը խեղդուկ ձայնը լսեցինք։ Ֆանի վախէն թէեւ փախչիլ ուզեց, բայց ես զինքը հանդարտեցուցի և այն գիշատիչ թռչունը բռնելու համար ուղղակի ձայնին եկած կողմը յառաջացանք։ Թռչունը կռահելով մեր գալը՝ անմիջապէս թռաւ ու խոյս տուաւ... Ասդին անդին, նոր փետտուած թռչունի նուրբ



փետուրներ տեսնուեցան, հովին շունչէն թռչկտուն։ Բազէին թողած կաղնիի թուփը խուզարկելով մեր ցաւագին ակնարկին՝ բոյն մը հանդիպեցաւ, անդուժ բազէին քանդիչ ճանկերուն ենթարկուած։ Բոյնին ձագուկներն արիւնի մէջ մնացած էին որոնց խեղճ մայրիկն ալ զիրենք պահպանելու և կեանքերնուն պառնացող վտանգին դէմ պաշտպանելու համար զոհուած էր։ Ձագուկներուն ամէնէն սոկարը, հրաշքով բազէին կենսաւէր ճանկերէն ազատ մնացած ըլլալով, մենէ օգնութիւն պաղատելու պէս կը ձայնէր, իր սրտառուչ ողբին խորունկ ազդեցութեամբը համակելով զմեզ »։

« Պանի փափկօրէն ձեռքին մէջ առնելով այս փոքրիկ թռչունը, մըմնջեց. « Թշուառ ձագուկներս մինակ մնացած են այլ « եւս աշխարհի վրայ: Անտարակոյս, այն վայրագ թռչունը այս « մէկն ալ գիշատելու համար դարձեալ պիտի գայ, վերջապէս « մենք եթէ ասիկա հոս ձգենք երթանք, կամ անօթութենէ պի- « տի մեռնի եւ կամ բազէին կեր պիտի ըլլայ»: Ու ես պատաս- « խանեցի. « Քանի որ այդպէս է, մենք ալ հոս չենք թողուր ու « տուն կը տանինք գինքը, մինչեւ որ մեծնայ եւ իր ուտելիքը « ճարելու վիճակին հասնի, այն ատեն կ'արձակենք»:

« Պանի այս խօսքերէս շափազանց գոհ մնալով, թռչունը տուն տարաւ եւ բամպակէ բոյնի մը մէջ տեղաւորեց: Այն օրէն սկսեալ, երկուքս ալ մասնաւոր հոգածութիւն մը ցոյց տալ սկըսանք թռչունին »:

(Շար.)

Թրգմ. Լ. ՍՐԱՊԵԱՆ

ԳԻՒՅԱԶՆ ՄԱՆՈՒԿ ՄԸ

ՎՕԼՆԷՅ ՊԷՔՆԷՐ

Ա. — ՊԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Այն մեծ նաւը որ բոլոր առագաստները բացած կը յառաջանայ, այս նաւը, որուն վրայ կը տեսնենք այնքան նաւաստիներուն երթեւեկը, գիտէ՞ք, ո՞վ է որ կը հրամայէ, կը քալեցնէ. տասներկու տարեկան տղայ մ'է՛ վօլնէյ Պէքնէր:

Վօլնէյ Պէքնէր ծնաւ 1748ին, Իրլանտացի աղքատ նաւաստիի մը տղան էր: Ուրեմն իւր դասակարգը խոնարհ էր, բայց, անտարակոյս որքա՛ն մեծ պիտի ըլլայ փառքը որ կ'ելլէ այս փոքրիկ մարդուն առջեւ, նաւաստիներու պէտ 12 տարեկան հասակին մէջ:

Նաեւ զատ ուրիշ տուն չունի, ուր իր հայրը նաւաստի է եւ իր հօրմէն զատ ալ ուրիշ դատատու չունեցաւ: Հազիւ 3 տարեկան կար Վօլնէյ՝ երբ իր հայրը իր փոքրիկ բազուկները նաւային ծանր աշխատութիւններու կը վարժեցնէր: Իր նաւագները հաճոյքով տեսան հինգ տարեկան տղու մը երկու մղոն լողալը, նաւուն վրայէն, ուրկէ իր հայրը ակնարկով իրեն կը հետեւէր. վօլ-

նէյ պզտիկ նաւաստի մը եղած էր, հոսանքներուն մէջ կը լողար, կայմերուն գագաթը կը մագլցէր, չուաններէն վար կը սահէր, և ամէն նաւաստիներէ յառաջ անցնելով կը կատարէր տրուած հրամանները: Այսպէս Վօլնէյ կը վարժուէր վտանգներուն հետ խաղալու, ինչպէս ծովու ալիքներուն հետ: Վօլնէյ հիմա նաւաստիներուն մէջ ամենէն քաջն ու յանդուգն է, եւ ամենէն գիտունն ալ: Երկարատեւ աշխատութեան եւ փափաքին առջեւ ամէն բան դիւրին է:

Հիմա, որ այլեւս իրեն հետ ծանօթացած ենք, Վշ տարեկան է և նաւուն մէջ մեծ աստիճան մը ունի: Օր մը նաւապետը իր հօրը առջեւ անոր ըսաւ. « Բարեկամս, եթէ այսպէս շարունակես՝ իմ պաշտօնէս աւելի բարձր պաշտօն մը պիտի ունենաս »:

Բ. — ՎՕԼՆԵՅԻ ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆԸ՝ ՀՕՐԸ ՀԱՄԱՐ

1760ին Բօրթ-Օ-Բրէնսէն ֆրանսա ճամբորդութեան մը միջոցին, պզտիկ անհնազանդ աղջիկ մը՝ որ Վօլնէյի առաջնորդած նաւուն մէջ կը գտնուէր, փախաւ իր դաստիարակուհւոյն քովէն որ կը քնանար եւ իր ազատութեան վրայ բոլորովին ուրախ նաւուն կամրջակին վրայ ելաւ: Հոն երկար ժամանակ ալիքներուն հետ, որք նաւուն կողերուն զարնուելով իր քով կուգային, գուարճացաւ, եւ տակաւ առ տակաւ եզերքին մօտենալով ցունցի մը ժամանակ՝ ծովուն մէջ ինկաւ երկայն ճիչ մը արձակելով:

Պզտիկ աղջիկը անյայտացած էր: Բարեբաղդաբար նաւաստի մը, Վօլնէյի հայրը, անոր անկումը տեսած էր: Ծովուն մէջ նետուեցաւ եւ երբ նորէն ալիքներուն վրայ երեւաց՝ պզտիկ աղջիկը գրկած էր: Աջ ձեռքով կը լողար, բայց նաւը, որուն առագաստները հովով լեցուած էին, բաւական հեռացած էր: Վօլնէյի հայրը լաւ լուղորդ մըն էր եւ հուժկու բազուկներուն շնորհիւ կրցաւ ընդհուպ նաւուն մօտենալ:

Յանկարծ նշմարեցին որ լուղորդէն քիչ մը հեռու սեւ մարմին մը մարդուն վրայ կը յառաջանար: Մարդը կոկորդալիւր սոսկալի աղաղակ մը հանեց, որ ծովուն աղմուկէն աւելի լսելի էր: « Ինձի, բարեկամներ... շանաճուկ մը... »: Յիրաւի, զինք հալածողը ծովային սոսկալի հրէշներէն մին էր: Շանաճուկը միշտ մարդուն կողմը կը յառաջանար, որ տղուն ծանրութեամբ, զոր դեռ կուրծքին վրայ կը սեղմէր, բոլոր գերմարդկային ոյժերը կը թափէր նաւուն հասնելու համար:

Նաւուն եզերքը աներեւակայելի խուճապ մը յառաջ եկած էր: Նաւազները հոն էին ամէնքն ալ եւ կամրջակին վրայէն կը դիտէին կուռն ելքը:

Ամէն մարդ հրացան կը փնտռէր, ու զայն շանաճուկին կողմը ուղղեցին: Գնդակները յուսացուած արդիւնքը չէին տար, որով՝ վետեա ջուրին մէջ իրենց ուժը կը կորսնցնէին, չկրցան նոյն իսկ անոր վազքը կասեցնել: Տակաւ առ տակաւ հեռաւորութիւնը, որ մարդը գազանէն կը բաժնէր՝ լմնցած էր:

Բայց այս վայկեանին, որ շանաճուկը կը լողար մարդը տըղուն հետ բռնելու, յանկարծ կեցաւ, ինք իր վրայ դարձաւ եւ արիւնով ներկեց ծովուն մակերեսը: Աներեւոյթ ձեռք մը կենդանին վիրաւորած էր:

«Վօլնէյ Պէքնէլին է՝» գոչեցին նաւուն վրայէն: Յիւրաւի Վօլնէյն էր, որ ահագին կացին մը ձեռք անցնելով՝ ծովուն մէջ մխրճուած էր առանց մէկէ մը տեսնուելու իր անձը հօրը համար զոհելու պատրաստ: Շանաճուկը վիրաւորուած եւ ուզելով վրէժ լուծել այն ձեռքէն, որ զինք վիրաւորած էր, ընդհուպ ձգեց հայրը եւ տղուն ետեւէն վազեց:

Վօլնէյի ուզածն ալ այս էր: Ինք կ'ուզէր վտանգը միայն իր վրայ դարձնել եւ որպէս զի շանաճուկը բոլորովին մոռնայ իր հայրը, վսեմ անձնալուծութեամբ մը ուղղուեցաւ նաւուն ընթացքին հսկառակ կողմը: Շանաճուկը տկարացած էր, կորսնցուցած արիւնին պատճառաւ, որ իր մեծ վէրքէն կը պորթկար, տղան ալ կը հասկնար որ ինքն կ'սկսէր տկարանալ: Գլուխը ետ դարձուց եւ տեսաւ որ իր հայրը փոքրիկ աղջկան հետ նաւուն մէջ կ'ելլէր: Հայրը ազատած էր: Վօլնէյ կրնար այլ եւս նաւ վերադառնալ, ֆորձեց ու երկար դարձուածքներէ վերջ նաւուն մօտեցաւ եւ նոյն իսկ զայն բռնեց: Ամէն կողմէ չուաններ կը նետէին, ամէն կողմէ բազուկներ իրեն ուղղուած էին եւ կ'ուզէին որ նաւուն կողերը բացուին ընդունելու համար այն տղան՝ որ իր հայրը ազատած էր: Արդէն Վօլնէյ չուան մը բռնած էր: Մի եւ նոյն ժամանակ շանաճուկը տեսնելով իր որսին աներեւութանալը, ժողվեց իր բոլոր ոյժերը եւ յարձակեցաւ, բերանը գրեթէ տղուն սրունքներուն հասցուցած էր, բայց նաւաստիները քաշեցին տըղան իրենց ուժեղ բազուկներով եւ հանեցին զայն վերջապէս նաւուն վրայ, եւ մինչդեռ Վօլնէյ ինքզինք իր հօր բազուկներուն մէջ նետած էր, կը տեսնէին շանաճուկը բոլորովին ծիւրած ստացած վէրքէն՝ կ'երթար վերջին շունչը տալու ծովուն խորը:

* * *

Օր մը Վօլնէյի հարցուցին թէ՛ փառքը կը սիրէ՞ր:

— Այո՛, պատասխանեց:

— Եւ գիտե՞ս թէ ի՞նչ է փառքը:

— Իր պարտականութիւնը կատարելը, պատասխանեց Վօլնէյ: Եւ յիշաւ Վօլնէյի ընդունած փառքը ամէնէն մեծն է:

Թարգմ. ԿԱՐԱՊԵՏ ԹԷՐՃԷՄԱՆԵԱՆ

ՕՐՈՒՄԱՆ ԳԵՒԻԹԵՐ

Թերթերն ու ընթերցանութիւնը . — Ընթերցողութիւնը . —
Երգն ու երաժշտութիւնը :

Պոլսահայ մամուլին ճոխութիւնը ու անոր արագօրէն աճումը, արդարեւ աչքառու սիրուն հանգամանք մը կը պարզէ . հա՞րկ կայ ըսելու թէ մամուլին աճումը մարդկութեան յառաջացումն է : Մարդ իբր հոգեկանն ու ֆիզիքական էակ մը, բնականէն զարգացման խիստ ընդունակ է . սակայն դիտելի է որ զարգացման դրութիւնը կանոններու վրայ հաստատուած է : Կարելի չէ մէկէն զարգանալ ու ոստումով մը իտէպին հասնիլ . եթէ երեք գիտցած ենք սիրուն իտէպ մը նախընտրել ալ հա՛րկ է զարգացման կանոններուն հպատակիլ ժիր գործունէութեամբ մը :

Տասնըիններորդ դարուն վերջալոյսին մէջ, երբեմն ինքնակոչ վերացական վարպետներ, զարգացման ընդհանուր կանոններուն հակառակ շատ մը ճոռումարանութիւններ բրին : Ասոնցմէ ամէնէն խիզախը, մարդը մեթոտիք ուսանողութենէ ազատագրելու համար կրթական հաստատութիւնները ձաղկեց ու անոնց վարիչները պախարակեց : Չոր օրինակ տեսէք ըստ «Մուտին», որ իր կեանքին մէջ դպրոց չէ գացած, բայց կրթական հանճարները անոր չրթունքներէն կը կախուին, ան առանց դպրոցական մը ըլլալու գիտութիւնները գերի կը բռնէ, եկեղեցիներ կը կառուցանէ, դարմանատուններ կը կանգնէ ու անկեղանոցներ կը հաստատէ . ուստի հարկ չի կայ տարիներով ժամանակ սպառելու, մարդ ի՛նչ որ պիտի ըլլայ՝ մէկէն կ'ըլլայ : Այս անգամ խօսքը խարտեաչ երիտասարդներուն, մանաւանդ երիտասարդուհիներուն ուղղելով . «կրթական կանոնները ձեր գեղեցկութիւնները կը խանձեն, ձեր առողջութիւնը կը քանդեն, ձեր թարմ ուժերը կ'ուժացնեն . հետեւաբար թօթափեցէք մեթոտիք ուսանողութեան խստապահանջ կանոնները որոնցմով ձեզ կը շլացնեն » :

Այս անգամ տիեզերական Մուտին խօսք կ'առնէր ու կ'ըսէր . «Կ'ողբամ երիտասարդութեանս անցեալ տարիներուն վրայ որոնք փոխանակ կրթական բուրաստանին մէջ անցընելու, ոչ-կրթական անապատներու մէջ անցուցի : Իմ յաջողութիւնս թերթերու, գիրքերու և յարատեւ ընթերցանութեան մէջ գտած եմ, ու ո՛չ թէ վայրկէնապէս : Մարդ թէպէտ զարգանալու խիստ ընդունակ է, բայց մէկէն զարգանալու ընդունակ չէ երբեք, մեր զարգացման համար ընտրութիւն, մեթոս ու յարասեւութիւն անհրաժեշտ են » :

Ճաւալի է որ մեզի ո՛չ թէ միայն մեթոտը ու յարատեւութիւնը կը պակսի, հապա ըմբռնուով անգամ: Երբեմն մարդիկ լուտանքներ կը տեղան ժամանակին վրայ, վասնզի իրենք հին ու անոր պահանջումները նոր են, եթէ այս մարդիկ իմաստուն ընտրութիւնով մը իրենք գիրենք օրէ օր զարգացման կանոններուն տակ դնէին, աւելորդ է ըսել թէ փոխանակ իրենք ժամանակէն հալածուելու, ընդհակառակն իրենք ժամանակը պիտի հալածէին: Ինքնազարգացման համար մեր ընտրութիւնները որչափ լաւագոյն ըլլան ա՛յնչափ աւելի շահաւոր կ'ելլանք: մեզ իրապէս զարգացնող թերթերը կամ գիրքերը անոնք չեն որ մեր քմահաճոյքին կը ծառայեն, այլ անոնք են որ օրուան կեանքը մեր առջեւ կը պատկերացնեն, մեզի նոր միջավայրին համեմատ նոր ուղղութիւններ կուտան ու մեզ ժամանակին մարդը կ'ընեն:

Ընդհանուր կերպով խօսելով, թերթ մը որ միայն դրամ չահելու համար լեզուն, առողջ սկզբունքները ու բարոյականը վրայ կուտայ, անկէ քմահաճոյքէ զատ ուրիշ բան սպասելու չէ: Օրագրութիւնը մեզ աստիճանաբար յառաջացնող գեղեցիկ մեթոտներէն մէկն է, ընթերցանութեան համար յարատեւութիւնը անհրաժեշտ է, սակայն եթէ ընտրութիւնը սխալ է, ապահովաբար յարատեւութիւնը կործանաբար պիտի ըլլայ: Տեսած ենք երբեմն երիտասարդներ ու երիտասարդուհիներ, որոնք ծայրահեղ ընթերցանողներ եղած են, մարդ ասոնց յարատեւ ընթերցանութեան վրայ ա՛յնչափ մը կը հիանայ որչափ կը յուզուի անոնց սխալ ընտրութիւններուն վրայ: Կը պնդենք թէ պէ՛տք է թեր կարդալ, անոր օգուտները թուել հոս շատ երկար պիտի ըլլար, պայմանաւ որ մեր վերը գրածներուն համապատասխանող թերթ մը ըլլար այն՝ նոյնպէս պէ՛տք է ընթերցանութիւնը մշակել օգտակար, կրթիչ ու շինիչ գիրքերու ընտրութեամբ: մեր կարդացածները իւրացնելով օգտուիլ գիտնալու ենք անկէ:

Ի՛նչպէս գիտենք արդէն, գրական մարդիկ աչքառու հանգամանք մը ունին, ուստի իւրաքանչիւր անհատ հետաքրքիր է անոնց յաջողութեան գաղտնիքները թափանծելու: Վերջերս մեր հրապարակագիրները սիրուն անակնկալ մը ըրին թէ «Ի՛նչպէս կը գրեն»: Մեր ներհուն գրագէտները իրենց վսեմ լուծեամբ աւելի գեղեցիկ բաներ ըսին կարծեմ՝ քան այն՝ մատի վրայի բացառութիւնները յարգելով՝ սկսնակ յառաջապահ գրողները որոնք փութացին իրենց «գրելակերպ»ը հռչակել: Անշուշտ ամէն մարդ իրեն յատուկ ձեւ մը ունի, ու ատոր մարդ չի հրնար միջամտել: Բայց մենք Յարութիւնեանի խօսքերը փոխ առնելով կ'ըսենք թէ անդին հոյակապ գրականութիւն մը կայ որ ճաշակէն առաջ է:

Հասկցուեցաւ որ ողորմելի ձեւերով կը գրենք եղեր. եթէ « Ի՛նչ-պէս կը գրեմ » էն ետքը « Ի՞նչ կը գրենք » ր հրապարակ նետուի, ա՛լ աւելի յուսախափ պիտի ըլլանք: Մեր մէջ Գաղանձեանի ու նման գրողները չեն ածիր, վասն զի չեն կարդար, կը գրեն առանց լուրջ տեսութեան, առանց ճոխ գաղափարներու եւ առանց շոշափելի օգուտ մը ընծայելու: Լաւ գրող մը ըլլալու համար միշտ կարգալու է, իսկ գրելու մասին պիտի ըսէի թէ պէտք է գեղեցիկ լեզուով, մաքուր ձեռքերով ու բարեացաւ կամ ոգիով գործել գթական տաճարին մէջ: Ըսել չենք ուզեր թէ տարին տասնը երկու ամիս քարոզ գրելու է, երբե՛ք, այլ ըսել կ'ուզենք թէ ա՛լ աւելի գրականութեան վարկ մը տալու համար գեղեցիկին ու վսեմին սաւառնելու ենք, ու մեզի հետ մէկտեղ ուրիշներն ալ զարգացնելու ենք, ո՛չ թէ ռամկանալու ենք:

Մանաւանդ անցեալները, հաճոյքն ունեցանք մէկէ աւելի անգամներ կարդալու մեր երաժիշտներուն վրայ, որոնք երաժշտութեան նման ամենանուրբ արհեստին մէջ իրենց կրած խաճաղաւ յաջողութիւններով փառաց պսակ մը կը դնեն իրենց համայնքին գլխուն վրայ: Եւրոպական թերթերուն այն դրուատալից տողերը մեծ կշիռ մը ունին, անոր համար որ գիտակցօրէն կը գրեն, ու եթէ անոնք ա՛յնչափ կը հիանան, մենք բնականօրօք ա՛լ աւելի կը հրճուինք: Այս առթիւ կը փափաքինք երկու խօսք գրել երաժշտութեան վրայ: Գեղեցիկ ձայներն ու երաժշտութեան ընդունակութիւնը չէ որ կը պակսին մեր երիտասարդներուն ու երիտասարդուհիներուն, ո՛չ ալ եւրոպական բարքերու բնականաւրու տենջն, ընդհակառակն մեր մէկ հայերէն գիրքին քով հինգ եւրոպական գիրք ունինք: Հա՛րկ կայ երգին ու երաժշտութեան ազդեցութիւնները ճառել, երբ գիտենք թէ այն է որ հոգիները կ'ոգեւորէ, անոր դերն ո՛րչափ մեծ եղած է աղքատասիրական նպատակներու առթիւ, պարպել տալով քսակները ամէնէն ագաւհներուն իսկ: Գլխովեան հաստատութիւններն երաժշտութեան շատ բան կը պարտին, եւ որչափ ատեն մարդուն զգացումները նրբանան, երաժշտութիւնն ա՛լ աւելի կարեւորութիւն պիտի արուի ու այն պիտի բարձրանայ: Զարմանալին այն է որ, մենք որ կարծուածէն աւելի օտարամու ենք ու մխրճուած անոնց գրականութեան մէջ, այնպէս չենք երբ խնդիրը երգին ու երաժշտութեան վրայ է զոր կ'անտեսենք. ինչո՞ւ կարգ մը ոչ-չինիչ վէպերու մէջ խորասուզուինք ու երաժշտութենէ խուսափինք, ինչո՞ւ մեր ջուր-թակն ու քիթառը չունենանք, ինչո՞ւ ամեն երաժշտապետներուն անունները չի գիտնանք, մինչդեռ վիպագիրներուն անունները շուրի պէս գիտենք: Երգն ամէնուն է, ու իւրաքանչիւր մարդու

քով կենալու է այն. չենք կարծեր թէ երգն ու երաժշտութիւնն անտեսելու չափ չար ենք, աղքատն ան չէ որ օրապահիկը դըժ-
ուարութեամբ կը հայթայթէ, այլ իրական աղքատն այն է որուն
հոգին մերկ է գեղեցիկ կարողութիւններէ. այսօր բիւր աղքատ
տղաքներ կան որոնց փոքրիկ մտքին մէջ մեծ տաղանդներ կան
ծածկուած. Միծաղելի դառնալու չափ կ'ելլենք երգն ու երա-
ժշտութիւնը կը քննադատենք, բայց անոր սէրը երբեք չենք
ներշնչէր:

ՀԵՐՄԷՍ

ԳԻՏԱԿԱՆ ՎԷՊ

ԾՈՎՈՒ ՀՐԵՃՆԵՐ

Սիւմուլթի տարօրինակ դէպքէն առաջ աբլօթօթիւս Ֆերօսի
ցեղը հազիւ հազ ծանօթ էր գիտութեան. կենդանաբանական և
ո՛չ մէկ ճիւղ այնքան մութ մնացած է որչափ ծովու յատակները
ապրող գիւտոններու այդ տեսակին վրայ խօսող գլուխը: Պարզ
գիպուածով մը միայն, 1815ին, Մօնաքօի իշխանը Ասորեան կղ-
զիներու շրջակայքը հանդիպեցաւ քանի մը նոր ձեւերու:

Ահագին կիտաժանի մը՝ կիտորաներէ վիրաւորուելով իշխանին
նաւուն մօտ ոստկեցաւ. հոգեվարքի տագնապին մէջ կարգ մը
խոշոր առարկաներ դուրս տուաւ. իշխանը անմիջապէս նաւակներ
ջուրը իջեցնել տուաւ եւ հաւաքեց զանոնք. գիւտոններու մարմի-
նի կտորուանքներ էին ասոնք՝ ահագին խոշորութեամբ եւ մինչև
այն ատեն անծանօթ մնացած. կ'երեւի թէ այս խոշոր ու դիւրա-
չարժ կենդանիները ովկէանոսներու խորերը կ'ապրին և բնաւ ծո-
վուն երեսը չեն ելլեր, եւ եթէ գիպուածով ծովեզերքի մը վրայ
սեսնուին, ո՛վ գիտէ ինչ տարօրինակ գիպուած առիթ տուած է
ատոր:

Առաջին մարդկային էակը որ կենդանի աբլօթօթիւս մը տե-
սած է — եւ տեսնելէն ետքը ապրած ալ է — գործէ քաշուած
թէյի վաճառական մըն էր, Ֆիզօն անուն, որ Սիւմուլթ հաս-
տատուած էր: Օր մը, կեսօրէ ետքը Սիւմուլթի եւ Լատրամի ծո-
ցին երկայնքը կը պտտկանէր: Այդ տեղուանքը քարակարկառները
խիստ բարձր են եւ անոնց կարմրորակ կողերուն վրայ տեսակ մը
սանդուղ բացուած է որ մինչեւ ծով կ'իջնէ: Այդ սանդուղին
վարը տարօրինակ խլրտուք մը Պրն. Ֆիզօնի ուղադրութիւնը

գրաւեց . նախ ան կարծեց թէ ծովային թռչուններ որս մը կը գիշատեն : Զուրերը տեղատուութենէ քաշուած էին և զինքը հետաքրքրող առարկան կարկառներէն բաւական հեռուն՝ բացերը տարածուող ժայռերուն վրայ կը գտնուէր : Պահ մը ետքը դիտեց որ թռչուններ օդին մէջ կը ճլուրտան առանց վար իջնել համարձակելու . գուցէ ահագին ձուկ մըն էր՝ որ հոգեվարքի դալուկին մէջ կը տապալլարկէր : Պրն . Ֆիզօն ուրիշ գործ մը չունենալով մտադրեց քանի մը պարապ ժամերը այդ հետաքրքրաշարժ դէպքերը ստուգելու գործածել : Շուտ մը սանդուղներէն վար իջաւ եւ դէպի այն կէտը ուղղուեցաւ , լարծուն ժայռերուն վրայէն ցատկըտելով , եւ սահելով վար չիյնալու համար կօշիկներն հանեց եւ տափատը մինչեւ ծունգերը վեր ժողվեց . կրնանք ըսել թէ իր կեանքը այս ամէնաչնչին պարագային պարտաւոր է : Բաւական բարձր ժայռ մը կը ծածկէր իր նպատակակէտը . երբ այդ ժայռին վրայ հասաւ , նախկին թէյափածառը սոսկումով տեսաւ կլոր ու մոխրագոյն առարկաներ , որոնք կէս մը գիշատուած մարդկային մարմինի մը շուրջը հաւաքուեր էին : Այդ կլոր զանգուածները նոր կենդանիներ էին ճիւղալային երեւոյթով , քիչ մը գլխոտներու կը նմանէին , ահագին թեւերով՝ որոնց իւրաքանչիւրը ծածկուած էր անհամար ծծիչներով : Մարմինին մեծութիւնը խոզի մը խոշորութեան կը հաւասարէր : Այս ճիւղներէն եօթը ութը հատ մը խռնուած էին դիակին քով , ուրիշ մէկքանիներ քիչ մը հեռուն ջուրին մէջ մխրճած կը մնային :

Պրն . Ֆիզօն բնաւ վախ մը չզգաց այս տարօրինակ կենդանիներու տեսքէն , գուցէ ապահովուելով անոնց դանդաղ երեւոյթէն , ընդհակառակն՝ բնական զայրոյթ մը զգաց այդ գազաններուն հանդէպ՝ որոնք մարդկային միտով կը սնանէին : Խոշոր քարի կտորներ հաւաքեց ու այդ թշուառականներուն վրայ արձակեց : Այն ատեն , դանդաղօրէն քակելով իրենց ահագին թեւերը սկսան յառաջանալ տարօրինակ աղմուկ մը հանելով : Պրն . Ֆիզօն զգաց իրեն սպառնացող վտանգը , կօշիկները ձեռքէն գետին ձգեց ու ետ դառնալով սկսաւ փախչիլ : Քսան քայլ հեռու , անգամ մը յետին նայեցաւ , յուսալով որ այդ կենդանիները իրենց առերեւոյթ դանդաղութիւնովը հեռուն մնացած ըլլալու են , բայց զարհուրելով տեսաւ որ ամէնէն մօտ գտնուողը իր կեցած քարին տակը հասեր էր : Սոսկումէն մտրակուած՝ դէպի կարկառները սկսաւ վազել , լարծուն ժայռերու վրայէն ցատքելով ու սահելով՝ միշտ աչքին առջեւ ունենալով թէ զինքը հալածող ճիւղները արդէն իրեն հասած են , երկու անգամ զգաց անոնց պաղ ծծիչներուն՝ իր մերկ ոտքերուն քսուիլը : Քարակարկառնե-

րէն վեր բարձրացող սանդուղին ստորոտը շատ հեռուն ըլլալ կը թուէր իրեն, և երկու գործաւորները որ հոն կ'աշխատէին, տարօրինակ էակներ կ'երեւային իր աչքին: Երբ Պրն. Ֆիզօն անոնց մօտ հասաւ՝ երեքը միասին սանդուղներէն վեր ածապարեցին եւ շուտ մը Սիտմութ հասնելով նաւակ մը պատրաստեցին՝ երթալ մարդկային դիակը ազատելու այդ զգուելի հրէշներէն:

(Շարունակելի)

Հ. - Կ. ՈՒԵԼՈ

Թարգմ. ԶԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԴՊՐՈՅԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Կ'ապրինք այնպիսի դարու մը մէջ ուր բարեբաղդաբար հարկ չմնար գիտութեան կարեւորութիւնը փաստել եւ մեր վարժարաններու վարիչներուն քարոզել թէ՛ ան դաստիարակութեան ամէնէն կարեւոր ամբողջացուցիչը ու տղու մը ապագայ գիտական կամ արհեստական զբաղմունքին նախատարերքն է: Բայց երբ համակրութեամբ կը վերաբերուինք դէպի գիտութիւնը և թերի կը նկատենք այն ծրագիրը որ գիտական դասեր չպարունակեր, միեւնոյն ժամանակ պէտք չէ մոռնանք որ գիտութեան ուսուցումը այն ատեն միայն կատարեալ է երբ անոր կ'աջակցին գործնական եւ փորձառական պայմաններ: Ահա այդ պայմաններն է որ կուգայ լրացնել Դպրոցի Թանգարանը, խնամքով կազմուած այն բուրուհմաւէտ փունջը որ հրապուրիչ կ'ընծայէ ցամաք գիտութիւնը: Անհրաժեշտ է ուրեմն որ դպրոց մը ունենայ իր թանգարանը եւ ուր ցուցադրուին առարկաներն ու հաւաքածոները այնպիսի տեղ մը զորս դպրոցի բոլոր ուսանողք կարենան միշտ աչիք անցնել. երկրորդ՝ սոյն հաւաքածոներն իրենց բնութեան ու դասաւորութեան տեսակետով պէտք է ունենան գիտական կարեւորութիւն:

Խօսելով առաջին պայմանին վրայ, չմոռնանք ըսել որ իսպառանօգուտ ու անարժէք ըլլալու պիտի դատապարտուին այն հաւաքածոյք որ որոշեալ ժամերուն միայն մասնաւորաց մատչելի կ'ըլլան. որպէս զի անոնք կարենան աշակերտին մտքին խօսուն իրեր ըլլալ պէտք է որ թանգարանապետի մը հսկողութեան ներքեւ միշտ աշակերտաց մատչելի ըլլան, հարկ չէ ըսել կարծեմ թէ ապակեայ ցուցափեղկերու ետեւ միայն պէտք է դասաւորուած ըլլան, եւն.:

Երկրորդ՝ թէ ցուցադրուած առարկայք պատշաճ դասաւորութիւն մը և գիտական կարեւորութիւն մը ունենալու են՝ կը նշա-

նակէ թէ դպրոցի գիտական հաւաքածոյներու փեղկէն պէտք է դուրս վտարել զուտ հետաքրքրաշարժ իրեր, և ասոնց տեղ՝ ջանալ, նոյն իսկ բոլոր ուսանողներու գործակցութեամբ, ձոխացնելու այն տեսակ առարկաներով, որոնք գիտական կամ ճարտարագիտական արժէք ու կիրառութիւն ունին: Գալով աշակերտաց գործակցութեանը՝ այս կերպով կարելի պիտի ըլլայ շահագրգռել զանոնք եւ անոնց ուշադրութիւնը դարձնել դէպի գիտութիւնը, դէպի դպրոցի թանգարանը, մանաւանդ երբ նուիրատուին անունը կրող պիտակ մը կը փակցուի քարին կամ բոյսին:

Որովհետեւ հանքերու ու ժայռերու պարզ կտորներ կարեւորութենէ զուրկ են՝ հետեւաբար այս տեսակ առարկաներու նըմոյշներուն համար պէտք է որոշ չափ մը ունենալ: Ասկից զատ, պէտք է նաեւ որ իւրաքանչիւր առարկայ իր գիտական եւ եթէ կարելի է իր արհեստական կիրառութեան տեսակէտով ցուցադրուի. այս կերպով աւելի դիւրին պիտի ըլլայ սորվեցնել առարկաներու գիտական եւ արհեստական ծանօթութիւնները: Այսպէս ժայռերու եւ հանքերու ցուցադրութեան մէջ պէտք է նոյն իսկ ամէնէն հասարակ տեսակէտները ներկայացնել չմոռնալով նշանակելու վրան կիրառութիւնը արհեստներու և զարդարանքներու մէջ: Շատ հրահանգիչ պիտի ըլլայ ներկայացնել ժայռերու վրայ հովի ազդեցութիւնը, սառուցման միջոցաւ անկիւնաւոր կտորներու եւ բլրեղներու կազմութիւնը, և այս վերջիններուն խիճի, աւազի և շաղախի ձեւով աստին անդին քլուիլը:

Գալով բրածոներու՝ ասոնց ամէնէն հասարակ տեսակներն իսկ խաւերու կազմութեան մասին լաւ գաղափար մը պիտի կարենան տալ: Հասարակ մետաղներէ մի քանին, ինչպէս երկաթ, պղինձ, անագ, կապար, զէնկ իրենց հանածոյներուն հետ պիտի կազմեն ուրիշ շարք մը:

Բուսաբանական բաժնին մէջ վայրի ծաղիկներ, բնիկ ծառերու տերեւներ, պտուղներ և ատաղձներու նմոյշներէն հրապուրիչ հաւաքածոները պիտի կազմեն:

Կենդանաբանական մասին մէջ խեցիկներ, միջատներ — որոնց մէջ առաջին տեղը տալով մեղուին ու շերամին — ինչպէս նաեւ թռչունի հաւկիթներ, նուազ շահեկան բաժինը չէ որ պիտի ներկայացնեն:

Սա ամբան եղանակին՝ երբ չենք ուզեր մեր պարապոյ տրամադրելի ժամերուն անդին ասդին սլքտալով ժամավաճառ ըլլալ, կարելի պիտի ըլլայ առանց մեծ ծախքեր ընելու՝ կազմել ամէնէն շահեկան նիւթերու ընտիր հաւաքածոներ:

Այս կերպով երբ կը յաջողինք կազմելու թանգարան մը,

մեր իրագիտութեան ինչպէս նաեւ Տարրաբանութեան, Բուսաբանութեան եւ Երկրաբանութեան դասերը շատ հաճելի կերպով պիտի սահին անցնին դասարաններուն մէջ. իսկ երբ այս գործնական ձեռնարկին հետ զուգընթաց կ'երթան ուրիշ պայմաններ, ինչպէս անձնական դիտողութիւններ, յիշատակութիւններ եւ փորձեր, ահա այն ատեն է որ իրականապէս ու գործնականապէս հետեւած կ'ըլլանք մեթոտական ընթացքի մը:

Կեսարիա

ՎԱՀԱՆ ՔԻՐՔՃԵԱՆ


ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔԶԵՌԻ ՏԱՔՈՒԹԻՒՆՈՎ ՊԱՂ ԶՈՒՐԸ ԵՌԱՑՆԵԼ

Առէք առանց ոտքի ջուրի գաւաթ մը, երեք քառորդը լեցուցէք և հաստ կտաւէ թաշկինակով մը վրան ծածկելով՝ թաշկինակին չորս ծայրերը գաւաթին բոլորտիքը կապեցէք: Թաշկինակին մէջտեղը պէտք է որ գաւաթին մէջը մտնէ մինչեւ հոն լեցուած ջուրին հասնելու չափ: Ձախ ձեռքերնիդ գաւաթին բերանը բռնելով գաւաթը շուտով մը դարձուցէք աջ ձեռքովնիդ եւ օդին մէջ այսպէս բռնեցէք: Երբ ձախ ձեռքերնիդ քաշէք, պիտի տեսնէք որ չէ թէ կաթիլ մը ջուր չի վազեր, հապա թաշկինակը կը պահէ իր դէպի ներս մտած դիրքը, ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ:

Հիմա, թաշկինակին ծայրերէն քաշեցէք՝ մինչեւ որ լաւ մը

ձգտուի կտաւը. բնական է որ ջուրն ալ մէկտեղ վար պիտի իջնէ եւ գաւաթին վեր դարձած յատակին ու ջուրի երեսին միջեւ գոյութիւն պիտի ունենայ պարապ միջոց մը ուր օդ չկայ :

Արդ մթնոլորտը վարէն վեր ճնշելով՝ դուրսի օդը թաշկինակէն ու ջուրէն անցնելով պղպաղակներու ձեւով պիտի պայթի հեղուկին՝ գաւաթի մէջի մակերեւոյթին վրայ : Այս փորձին ակա-նատեսները գրգռացող ջուրի ձայնը պիտի առնեն եւ նոյն իսկ կարծեն թէ գաւաթին մէջի ջուրը կ'եռայ կոր :



Մեր սիրելի ընթերցողներէն ո՞վ կրնայ սոյն չիշին Ա. բաց-ուածքէն ներս մտնելով Բ. կողմէն դուրս ելլել :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Նիկովիդիա, Յ. էֆ. Տ. Ա. — Ստացանք, շնորհակալ ենք, կրնաք գիրքը 6 ղրշի տալ :

Ամասիա, Հ. էֆ. Խ. — Յանձնարարութեանց երկրորդ մասն ալ ղրկուեցաւ Սամսոն. զատ նամակ կ'ընդունիք :

Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յ. — Նամակնիդ ստացանք, բայց ղրկուած գրամը՝ ոչ :

Կը խնդրուի Տպարանիս ու Թերթին Խմբագրութեան հետ առկախ հաշիւ ունեցողներէն որ փութով ղրկեն պարտքերնին :

ԽՄԲԱԴՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Մանգումէի տպարանին կից

ՄԱՅԻՐԱՆՄԱՆ

Շ Մ Շ Մ Շ Մ Շ Մ Շ

ՑԱՆԿԱՆՈՒՆԵԱՆԻ ԳՂՈՇՋԱՌԱՆ

Առաջին գլխադասումը չի բաժանում, լուծված ձևերում դրան
 չի միջակ, իսկ լուծված ձևում չի, լուծված ձևում չի, լուծված ձևում չի
 լուծված ձևում չի, լուծված ձևում չի, լուծված ձևում չի, լուծված ձևում չի

30
 22
 24
 30

30
 22
 24
 30

Երկրորդ գլխադասումը չի բաժանում, լուծված ձևերում դրան
 չի միջակ, իսկ լուծված ձևում չի, լուծված ձևում չի, լուծված ձևում չի

Շ Մ Շ Մ Շ Մ Շ Մ Շ

Շ Մ Շ Մ Շ Մ Շ Մ Շ

Առաջին գլխադասումը չի բաժանում, լուծված ձևերում դրան
 չի միջակ, իսկ լուծված ձևում չի, լուծված ձևում չի, լուծված ձևում չի
 լուծված ձևում չի, լուծված ձևում չի, լուծված ձևում չի, լուծված ձևում չի
 լուծված ձևում չի, լուծված ձևում չի, լուծված ձևում չի, լուծված ձևում չի

Շ Մ Շ Մ Շ Մ Շ Մ Շ

Երկրորդ գլխադասումը չի բաժանում, լուծված ձևերում դրան
 չի միջակ, իսկ լուծված ձևում չի, լուծված ձևում չի, լուծված ձևում չի

Շ Մ Շ Մ Շ Մ Շ Մ Շ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՐԱԹԱԿԱՆ

ՆՈՒ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վստահականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆԷ

Պոլսոյ համար

30 դրուշ

Գաւառաց

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վստահականացի 12 տետրի գաւ առնել ուղղողը պէտք է վճարէ 12 դրուշ:

ԲԻԻՐԱԿՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹԸ

Տարեգլխէն սկսեալ բնդարձակուած կը հրատարակուի, ամէն անգամ, երբ ու շահեկան բովանդակութեամբ մը, պարունակելով զեղեցիկ յօդուածներ, ստորագրուած կարող գրիչներէ:

Բիւրակն իր ուղղութեամբը եւ բովանդանութեամբը կը ներկայացնէ լուրջ հրատարակութիւն մը արժանի ընթերցանութեան՝ ամէն դասակարգի անձներու համար:

ՀԱՍՑԷ

Կ. Պոլիս, Պապը Ալի հաստիսի, Բաշի Էֆ. խան, Թ. 38, Բիւրակնի տնքագրութիւն.